ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1220-Ա « 04 » մարտի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ ԱՃԵՄՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ Հ.3/2 ՀԱՍՑԵՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԷԴՈՒԱՐԴ ՌԱՖԻԿԻ ԵՐԻՑՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12-ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 23.10.2025թ. տրված մասնագիտական եզրակացությունը, «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից 19.02.2025թ. տրված տեխնիկական դրական եզրակացությունը, հաշվի առնելով ինքնակամ կառույցների արտաքին չափերի մասին «ԻԴԻ ԸՆԴ ԼՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից 30.12.2022թ. տրված եզրակացությունը, ընդհանուր համատեղ սեփականատիրոջ կողմից 02.10.2020թ. հ.5406 տրված համաձայնությունը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած անձի դիմումները (13.01.2023թ. հ.Դ-3737-23, 07.08.2023թ. հ.Դ-96125-23թ., 24.01.2024թ. հ.Դ-10912-24, 22.07.2024թ.. հ.Դ-93404-24, 22.08.2024թ. հ.Դ-107086-24, 23.09.2024թ. հ.Դ-120256-24, 24.10.2024թ. հ.Դ-136331-24, 26.11.2024թ. հ.Դ-150078-24, 20.02.2025թ հ.Դ-19260-25, 24.03.2025թ. հ.Դ-30776-25, 04.04.2025թ. հ.Դ-36109-25, 13.05.2025թ. հ.Դ-50562-25, 02.06.2025թ. հ.Դ-58140-25, 04.07.2025թ. հ.71792-25, 08.07.2025թ. հ.Դ-737106-25, 12.08.2025թ. հ.Դ-87538-25, 29.09.2025թ. հ.Դ-107066-25,02.10.2025թ. հ.Դ-109037-25).

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ք.Երևան, Էրեբունի, Աճեմյան փողոց 2-րդ նրբանցք հ.3/2 հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած 91.3 քառ.մետր (սեփական) և 41.5 քառ.մետր (ընդհանուր համատեղ սեփականություն) մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ (օգտագործման նպատակը)՝ սահմանել բնակելի կառուցապատման:

2. Երևան, Նորք-Մարաշ, Էրեբունի, Աճեմյան փողոց 2-րդ նրբանցք հ.3/2 հասցեում ՝ սեփականության, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 11.08.2010թ. հ.2668897 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր 2022XN6CSZ) քաղաքացի Էդուարդ Ռաֆիկի Երիցյանին պատկանող հողամասում ինքնակամ իրականացրած 82.25 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի տուն՝ 81.19քմ, պարիսպ՝ 1.06քմ) ճանաչել օրինական:

3. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 430000 (չորս հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ